# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4095-Ա « 08 » հոկտեմբերի 2025 թ.

## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՍԵԼ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Մարսելի քաղաքապետի առաջին տեղակալ Միշել Ռուբիռոլայի հրավերը՝ առողջապահության ոլորտում համագործակցության հարցեր քննարկելու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը ս.թ. հոկտեմբերի 14-ից 18-ը գործուղել Ֆրանսիայի Հանրապետության Մարսել քաղաք՝ հետևյալ կազմով՝

| | |
|---|---|
| Սարգիս Մադաթյան | Երևանի քաղաքապետի տեղակալ |
| Դավիթ Կարապետյան | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ |
| Լենա Մելքոնյան | Երևանի քաղաքապետի օգնական |
| Նորա Հարությունյան | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության արտաքին հարաբերությունների բաժնի գլխավոր մասնագետ |
| Հովհաննես Զոհրաբյան | «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության տնօրեն |

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված ծախսերն իրականացվում են Երևանի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին, բացառությամբ՝ գիշերավարձի, որը հոգում է հրավիրող կողմը, իսկ Հովհաննես Զոհրաբյանի գործուղման հետ կապված ծախսերն իրականացվում են «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին, բացառությամբ՝ գիշերավարձի, որը հոգում է հրավիրող կողմը:

3.Երևանի քաղաքապետի տեղակալ Սարգիս Մադաթյանի բացակայության ընթացքում քաղաքապետի տեղակալի պարտականությունների կատարումը վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանին:

4.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյանի բացակայության ընթացքում վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետի տեղակալ Անահիտ Չարխիֆալաքյանին:

5.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության արտաքին հարաբերությունների բաժնի գլխավոր մասնագետ Նորա Հարությունյանի բացակայության ընթացքում բաժնի գլխավոր մասնագետի պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի առաջատար մասնագետ Մելինե Պողոսյանին:

6. «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Հովհաննես Ջոհրաբյանի բացակայության ընթացքում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության բուժական գծով տնօրենի տեղակալ Սեյրան Հովհաննիսյանին:

7.Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ** 